## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

## ՔԱՂԱՔԱՑԻ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱ-ՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 309.1 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍ-ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒ-ԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 3-րդ մասի՝ «Քաղաքացի Ա. Մանուկյանի դիմումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի սահմանադրականությունը վիճարկելու մասով ընդունել քննության, իսկ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի՝ դիմումի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական դատա-վարության օրենսգրքի 221 հոդվածի 7-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասով մերժել, քանի որ այդ դրույթը դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատա-կան ակտով կիրառված չէ, բացի դրանից, դիմողն ըստ էության բարձրացնում է ոչ թե այդ դրույթի սահմանադրականության, այլ դրա կիրառման իրավաչափության հարցը, ինչպես նաեւ դիմողը չի հիմնավորել վիճարկվող դրույթի եւ իր սահմանադրական իրավունքների խախտման փաստի միջեւ պատճառահետեւանքային կապը:

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործի դատաքննությունն սկսել 2010 թվականի մարտի 30-ին, ժամը 11.00-ին:

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Կ. Բալայանին:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 6-րդ մասի հիման վրա գործի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

5. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 3-րդ մասի, դիմողի՝ պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդության հիման վրա դիմողին ազատել պետական տուրքի վճարումից:

6. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 3-րդ մասի համաձայն սույն գործով որպես պատասխանող կողմ դատաքննությանը ներգրավել ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունած մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 դեկտեմբերի 2009 թվականի
ՍԴԱՈ -127